

ԲԱԺԻՆ 6. ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 6: ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ
SECTION 6: HISTORY OF ARMENIAN PEDAGOGICAL THOUGHT

37.012.1:2

ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓԻԼԻՍՈՓՈՍՅԱԿԱՆ
ՈՍՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ԵՎ ԴԲԱՆՑ ԿՐՈՆԱԿԱՆ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարությունյան Նազիկ
ԵՊՀ, Հայաստան
Բաղդասարյան Վիկտորիա
ԵՊՀ, Հայաստան

Համառոտ ներածություն: ՀՀ անկախացումից ի վեր հասարակության հոգևոր կյանքում անհրաժեշտություն կար խորհրդայնացված Հայաստանի 70-ամյա անաստվածությունը թոթափելու և քրիստոնեական հավատքի վերագարթոնքի համար նախադրյալներ ստեղծելու: Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսը 20-րդ դարի՝ հայ ժողովրդի համար վճռորոշ այդ ժամանակաշրջանի այն կարկառուն դեմքերից էր, որն իր վրա վերցրեց մեր ժողովրդի մեջ հոգևոր և բարոյական առողջության վերակենդանության, սեփական ինքնության հետ վերստին հարազատացում սերմանելու բարդ ու պատասխանատու առաքելությունը: Իր քարոզներում և աշխատություններում անդրադառնալով փիլիսոփայական հասկացություններին և դրանց կրոնական մեկնություններին՝ Վեհափառը նոր լույսի տակ է ներկայացնում անձի ինքնաճանաչման հարցերը:

Բանալի բառեր: Ազգային ինքնություն, ինքնաճանաչում, մարդկային էություն, ես-ի բացահայտում, կրթություն, դաստիարակություն, հավատք, կյանքի իմաստ, բարոյախոսություն:

Հիմնախնդիրը: Ուսումնասիրության հիմնախնդիրը Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի փիլիսոփայական մոտեցումների և կրոնական հայացքների վերհանումն ու համադրումն է անձի ինքնաճանաչման հարցերին:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրի վերաբերյալ կան տարբեր ժամանակաշրջանի օտարազգի և հայ փիլիսոփաների, մանկավարժների և հոգեբանների ուսումնասիրություններ, որոնք անդրադարձել են հիմնահարցին տարբեր տեսակետներով ու վերլուծական մոտեցումներով: Նրանց թվում են Սոկրատեսը, Շահան Բերբերյանը, Հրաչիկ Շաքարյանը, Հովհաննես Թութունջյանը, Նազիկ Հարությունյանը, Արթուր Շոպենհաուերը, Հանրի Բերգսոնը, Ալֆրեդ Ադլերը, Կարլ Ռոջերսը, Աբրահամ Մալլոուն, Վ. Գ. Մարալովը, Վ. Ս. Սոլովևան, Ն. Ա. Բերդյաևը:

Հոդվածի նպատակը: Ուսումնասիրության նպատակն է վերլուծել Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսի փիլիսոփայական մոտեցումներն ու կրոնական հայացքներն անձի ինքնաճանաչման հարցերին:

Հետազոտության նորույթն այն է, որ առաջին անգամ են ներկայացվում Գարեգին Վեհափառի փիլիսոփայական մոտեցումներն ու կրոնական մեկնություններն անձի ինքնաճանաչման հարցերում:

Հիմնական նյութի շարադրանք: Գարեգին Առաջին կաթողիկոսի փիլիսոփայական և կրոնական հայացքները ձևավորվել են դեռևս վաղ պատանեկության տարիներից՝ դպրեվանքում ուսանելու շրջանում: Ինչպես հետագայում նշել է Վեհափառը, «ինձ դուր էր գալիս վարդապետական աստվածաբանությունը, որովհետև փորձում է մարդկային լեզվի կարելիություններով որքան հնարավոր է պարզ արտահայտել քրիստոնեական ճշմարտությունները: Շատ էի սիրում Եկեղեցու

պատմությունը, որում ես վերագտնում էի այդ նույն ճշմարտությունները, բայց ապրված, կյանքի փորձով հաստատված պատմության ընթացքում:

Իմ հոգեմտավոր զարգացմանը նպաստած դասախոսներից ես շատ բանով պարտական եմ փիլիսոփա և արվեստաբան Շահան Բերբերյանին, որը եղել է Սորբոնի նախկին ուսանող և հետևել է Հանրի Բերգսոնի դասախոսություններին: Նա մեզ հաղորդում էր հոգևոր այնպիսի շունչ, որով իրական էր դառնում մարդկային կյանքի արժեքի վերաբերյալ մեր հասկացողությունը» [3, 58]:

1944 թվականից Շահան Բերբերյանը Անթիլիասի դպրեվանքում դասավանդել է փիլիսոփայություն: Լինելով Ա. Բերգսոնի աշակերտը՝ Բերբերյանը որոշ առարկաներ դասավանդել է իդեալիստական և կրոնական մեկնաբանությամբ, ինչն էլ հատկապես ոգեշնչել ու ոգևորել է պատանի ուսանողին:

Հատկանշական է, որ Վեհափառն իր խոսքում գրեթե միշտ շաղախով է ներկայացնում կրոնականն ու փիլիսոփայականը: Երբ խոսում է մարդ արարածի մեջ Աստծո ներկայության մասին, որպես ակներև օրինակ փաստում է մարդկային խիղճը. «Քրիստոսը Բանն է՝ Խոսքը, իսկ խիղճն այն տեղն է, որտեղ նա խոսում է: Ուստի, որոշ իմաստով, Աստծո հետ հաղորդությունը հաղորդություն է նաև ինքներս մեզ հետ, կամ, ավելի շուտ, Աստծո պատկերի գոյության որոնումն է մեր հոգու խորքում: Աստված, որ երկնքում է, մեզ անհասանելի յոթերորդ երկնքում չի ապրում, ապրում է մեր մեջ» [3, 19]:

Վեհափառ հայրապետն իր աշխատություններում հաճախ է խոսել մարդկային էության, անձի ինքնաճանաչման ու «ես»-ի բացահայտման հարցերի մասին: «Ծանի՛ր զքեզ...» աշխատության մեջ նա տվել է այլ փիլիսոփաների՝ անձի ինքնաճանաչմանը նվիրված գաղափարների իր մոտեցումներն ու հայացքները: Ուսումնասիրելով հույն փիլիսոփա Սոկրատեսի աշխատությունները՝ Վեհափառ հայրապետը գրում է. «Մարդու ինքնաճանաչումը, կեանքի իմաստին հասկացողութիւնը Սոկրատի համար կը նշանակէ այն լուսամիտ ըմբռնողութիւնը, որով մարդ կարող կը դառնայ գատորոշելու իրականութիւնը խաբկանքէն, լաւը վատէն, կարեւորը անկարեւորէն, բարին չարէն, երջանկութիւնը հաճոյքէն» [4, 16]: Այլ կերպ ասած՝ մարդ պետք է իմանա իր սահմանները, իր կարողության ճշգրիտ պատկերացումը և կարողանա ամեն ինչ հաշվի առնել իր արժեքի համեմատական սահմանների մեջ և չտարվի ինքն իրեն խաբելով, սուտը ճշմարիտի հետ չփոխելու համար և ինքն իր համար բարին ընտրելու՝ առանց ինքնախաբեության, ինքնամեծացման, ինքնաչափազանցության:

Այս առումով հետաքրքրական է նաև Վեհափառի անդրադարձը գերմանացի փիլիսոփա, գրող Արթուր Շոպենհաուերի (18-19-րդ դարեր) այն մտքին, որ երջանկությունը և դժբախտությունը չեն գալիս նրանից, ինչ մարդն ունի կամ ինչ որ ներկայացնում է. դրանք առաջ են գալիս հենց իրենից: Սոկրատեսյան հայտնի մտքից է բխում Շոպենհաուերի փիլիսոփայությունը, որ իրական առաքինությունը մարդու համար ինքնաճանաչումն է: Ըստ Վեհափառի՝ կյանքում անձի ներաշխարհից եկողը զգացումի, մտածումի, կամքի լուսարձակն է, որն էլ հստակեցնում է կյանքի որակն ու արժեքը: Մարդու տեսակետն է իրականության վրա լույս սփռողը, մարդու մոտեցումը, կեցվածքը, վերաբերմունքը, արժևորումն է, որ սահմանում է կյանքի իրականության իմաստն ու արժեքը [4, 18]:

Ի վերջո, ի՞նչ է ինքնաճանաչումը: Մի կողմից սահմանումը բավական պարզ է՝ ելնելով «ինքնաճանաչում» եզրույթի կազմությունից, մյուս կողմից՝ բավականին խրթին՝ որպես «ես»-ի ճանաչման, ենթադրյալ և առկա յուրահատկությունների, անձնային, ինտելեկտուալ առանձնահատկությունների բացահայտման գործընթաց:

«Մարդն է ամեն ինչի չափանիշը». այդ դրույթը պետք է տարածել նախ և առաջ մարդու էության և կյանքի իմաստի ճանաչման վրա, որովհետև բնության գաղտնիքները կարող է ճանաչել միայն Աստված: «Ճանաչի՛ր ինքդ քեզ» կարգախոսը նրան մղում է մարդկային գիտելիքի բնույթի ուսումնասիրության: Նրա համար որևէ բանի մասին գիտելիք ունենալն այլ բան չէ, քան սեփական ես-ի մասին հասկացության և սահմանման իմացությունը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինն իր անդրանիկ կոնդակում (1995 թ., հունիսի 18, հմր. 1Ա/1) տալիս է մարդու կյանքի իմաստը, երջանկությունը պայմանավորող նախապայմանները՝ սերը, ուրախությունը, խաղաղությունը, համբերությունը, բարությունը, հավատը, հեզությունն ու ժուժկալությունը: Երբ այս առաքինագործ ուժերը կյանքի կոչվեն, մարդու ձգտումը ճշմարիտին և լավին

կղաճնա ավելի արդարացված [1, 179]: «Կատարելությունը իրեն համար գոյավիճակ մը ըլլալէ աւելի ձգտում մըն է, յարագնաց ընթացք մը դէպի կատարելար, մերձեցման մղում մը դէպի Աստուած» [2, 155]:

Ինքնաճանաչումն ամենադժվար երևոյթն է, բայց միաժամանակ ամենաանհրաժեշտը, կենսականը, հրամայականը և օգտակարը մարդ էակի համար: Իմանալը միանգամայն հաճույք է և բարիք, չիմանալը՝ ներքին հոգեկան նեղություն և տառապանք: Իր հիմնական կառուցվածքի մեջ կյանքը՝ մարդու շարունակական կազմավորումը, տնական ինքնակերտումը, հարաճուն գիտության ընդարձակվող և խորացող ճանաչման ընթացք է:

Մարդը «յարաճուն եւ յարափոփոխ» էակ է: Կյանքի զարգացմանը զուգահեռ և միջավայրի ազդեցությամբ, ստացած կրթությամբ և դաստիարակությամբ, կյանքում կատարած սոցիալական դերերով պայմանավորված՝ փոխվում է նրա ինքնըմբռնումը, որովհետև մարդը կայական գոյություն չէ, այլ «լինելային երեւոյթ»: Հետևաբար իր ինքնաճանաչումը շարունակական ընթացք է և ոչ թե առարկայական, մեկանգամյա ձեռքբերովի իրականություն [4, 14]:

«Մարդու ինքնութիւնը բազմաշերտ հողին նման հարստութիւն մըն է: Ամէն անգամ որ զայն փորեւ ու պեղես, նոր նոր ու կենսալի ուղիքեր դուրս կու գան եւ յաճախ մարդ-հողագործը կը զարմացնեն... Մարդն ալ կեանքի շարժումներէն ազդուած՝ նորանոր զգալու, մտածելու եղանակներ, տարածքներ և արժեւորումներ կը յայտնաբերէ իր իսկ ինքնութեան մասին: Հետևաբար, մարդ կոչուած էակը ի յառաջագունէ եւ միանգամընդմիջտ ճանաչելի ու սահմանելի էակ մը չէ. ինքնին խորհուրդ մըն է իր ներքին եւոյթան իմացումի տեսակէտէն դիտուած» [4, 15]:

Ինքնությունը, սեփական նկարագիրը և ինքն իրեն բացահայտելու համար մեծ անկեղծություն և քաջություն է հարկավոր: Հատկապէս այն պարագայում, երբ անձն ինքնարդարացման հակում ունի: Ինքնաճանաչման համար ճիգ գործադրելիս մարդը պետք է կարողանա հաղթել այդ հոգեբանությանը, այլապէս այն անթափանց վարագոյրի պէս կփակի անձի «ինքնատեսողությունը»: Ճշմարտության իմացությունն անհրաժեշտ է գործնական կյանքում ճշմարիտ ապրելու, ճշմարիտ ուղիներ գտնելու համար: Եթէ մարդիկ չգիտեն՝ ինչ է բարին, չարը, արդարությունը, ազնվությունն ու գեղեցիկը, ապա նրանք չեն կարող գտնել երջանիկ ապրելու գաղտնիքը:

Այս բոլոր դիտարկումները հանգում են այն հստակ եզրակացության, որ ինքն իրեն ճանաչելը՝ «ծանիր գրեզ»-ը, մշտապես հրամայական է մարդու համար:

«Հայությունը», մեր ժողովրդին պատկանելու այդ զգացումը, անքակտելիորեն կապված է կրոնական հավատքի հետ, քանի որ մեր մշակույթը ներծծված է քրիստոնեությամբ, մեր պատմությունը ձևավորվել է քրիստոնեական հավատքով: Այսօր շատերն են խոսում հավատքի մեջ մշակույթի ներթափանցման մասին, քրիստոնեական հավատքը պետք է մարմնավորվի որոշակի մշակույթի ձևերի մեջ: Այն կարծիքին են, որ դա Հայաստանում տեղի է ունեցել: Երբ խոսում են մեր ժողովրդի մշակույթի, նրա հազարամյա պատմության մասին, անխուսափելիորեն խոսում են նաև մեր Եկեղեցու, Սուրբ Գրիգորի, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին, որը ստեղծեց մեր այբուբենը... » [3, 55]:

Այսինքն՝ պետք է ապրել Ավետարանը, հոգի ու կյանք ստանալ, ունկնդիր լինել նրա խոսքին, իրագործել դրանք:

«Կրօնները կարծես թերի են, անհրապոյր եւ անգեղեցիկ՝ առանց խորհուրդի: Այլապէս, մարդկային բանականութեան եւ փորձառութեան ծնունդ կրնան ըլլալ, առաւել կամ նուազ չափով համոզիչ կամ օգտակար: Չոր բարոյախօսութեան մը կը վերածուի՝ եթէ պարպուին խորհուրդէն: Անպայման կը դառնան դատարկ ձեւապաշտութիւն մը, երբ դադարին նիւթին մէջէն, բայց նիւթէն անդին՝ գերբնականին զգացումին թելադրական ոյժն ըլլալէ:

Քրիստոնեական կրօնին մէջ բանական, բարոյախօսական եւ ծիսական-արարողական այս տուեալներուն հետ միասին եւ զանոնք գմբէթող իմաստով ու դերով կայ խորհրդավորը, որուն արժէքն ու նշանակութիւնը իրապէս հասկցող եւ իր կեանքին մէջ անոնց տուն տուող եկեղեցիներէն մէկն է Հայոց եկեղեցին...» [5, 168]:

Վեհափառի կրոնական հայացքները հասկանալու համար նախ և առաջ հարկավոր է ըմբռնել նրա մտքերը: Նա Աստծու խոսքը նույնացնում է Անձի հետ, մարմնացած Ճշմարտությունը՝ Բանի. «Մեր աշխարհում խոսքի առատություն կա, գուցե ավելի, քան անհրաժեշտ է, ամեն օր մեր կողմից արտասանվող բյուրավոր բառեր անմիջապէս էլ անհետանում են: Գրավոր խոսքերն ավելի երկար են

ապրում, որովհետև, ինչպես առածն է ասում, «խոսքերը թոչում են, գրվածքները՝ մնում»: Մակայն գոյություն ունի նաև այնպիսի խոսքերի մի կարգ, որոնք դառնում են կյանք ու գործ. դրանք մարմնացած խոսքերն են՝ Քրիստոսի խոսքերը: Կարծում եմ, որ ամբողջ աշխարհի քրիստոնյաներն այսօր պետք է հասկանան, որ Աստվածաշունչը մտահայեցական, տեսական ճշմարտությունների և կամ փիլիսոփայական ինչ-որ շարադրանք չէ, այլ Աստծու կամքի դրսևորումը, որը պետք է մարմնավորվի իրական գործերում» [3, 26]:

Հարց է առաջանում. արդյո՞ք փիլիսոփայությունը՝ իր բանականության հիմքով, և կրոնը՝ իր հավատքի հիմքով, իրար հակասող ու հակադիր հասկացություններ չեն: Չէ՞ որ շատ աստվածաբաններ ու փիլիսոփաներ տարակարծություններ ունեն այս հարցերի շուրջ: Վեհափառ հայրապետի կարծիքով բանականությունը չի կարող արգելք հանդիսանալ հավատքի համար, ընդհակառակը, այն կարևոր տարր է կյանքում հավատքի շնորհի դրսևորման համար. «Չկա մարդ, որն իր բանականության օգնությամբ չկարողանա հանգել անդրանցական իրականության գոյությանը: Բազմաթիվ մտածողներ իրենց փիլիսոփայական համակարգերում զգացել են Աստծու գաղափարի անհրաժեշտությունը, և նրանցից շատերը հաստատել են նրա գոյությունը: Բայց փիլիսոփաների այդ Աստվածը հաճախ մեր կյանքի հետ առնչություն չունի. խոսքը վերաբերում է Աստծու գաղափարին, Աստծու հասկացությանը, այլ ոչ թե հենց իրեն՝ Աստծուն: Հավատացյալ մարդկանց համար Աստված գործում է մեր կյանքում: Սրանում է կայանում տարբերությունը անաստվածների և հավատացյալների. անաստվածները հաճախ չեն մերժում Անսահման և Հավերժական Էակի գոյության գաղափարը, սակայն, նրանց կարծիքով, Աստված մաս չի կազմում մեր կյանքին, քանի որ այդ կյանքը ղեկավարվում է միայն բանականությամբ: Այդ պատճառով ես կուզենայի ասել, որ բանականությունը չի հակասում հավատքին, բայց հաճախ ի գործու չէ հասնելու մարդկային կյանքին Աստծու միջամտության ըմբռնողությանը, որովհետև այստեղից է սկսվում հավատքը: Խոսքն Աստծու հետ բարեկամանալու, նրան հաղորդվելու մասին է: Խորհրդածելով Աստծու մասին, ես չեմ մտածում այլ պատճառների նախապատճառի մասին, ինչպես ասում էր Արիստոտելը: Ես Արարիչ Աստծու մասին եմ մտածում, որը սեր է, այն Աստծու մասին, որը մեզ բացահայտում է երջանկության գաղտնիքը: Քրիստոնեական հավատքով Աստված մարդկանց ներկայանում է իբրև սեր իր արարչագործությամբ, հայտնությամբ և հաղորդականությամբ: Հավատքը մեզ բացահայտում է այն Աստծուն, որը մեզ հետ անմիջական հարաբերության մեջ է, այլ ոչ թե այն Աստծուն, որը մտածողության կարգ է և առնչվում է միայն բանականությանը» [3, 85]:

Աստծուն սիրելը մերձավորին սիրել է նշանակում: Եթե հավատում ենք, որ Աստված դրսևորվում է իր ստեղծած արարածների մեջ, ապա պիտի հստակ հասկանանք, որ Աստծո հանդեպ սերը երբեք ուղղահայաց սեր չէ միայն, այլև՝ հորիզոնական: «Միտ այս երկու չափումները փոխադարձաբար լրացնում են միմյանց, հարաբերակցվում այնպես, ինչպես արևն ու իր ճառագայթումը, որովհետև ինչպես որ չկա արև՝ առանց ճառագայթումի, այնպես էլ չկա Աստծու հանդեպ սեր՝ առանց մերձավորի նկատմամբ սիրո» [3, 28]:

Այս հիմնավորմամբ ու տրամաբանությամբ կրոնի հիմքը կարող ենք համարել բարոյագիտությունը: Մակայն այդ դեպքում ո՞րն է կրոնի ու բարոյագիտության տարբերությունը, եթե երկուսի հիմքում էլ սերն է Աստծո նկատմամբ, մարդասիրությունն ու ինքնագոհողությունը: Աստված անբաժան է իր ստեղծած արարածներից. «Եթե Աստծուն բաժանենք մարդկանցից, արդարև, կստացվի մի կողմից՝ բարոյագիտություն, մյուս կողմից՝ փիլիսոփայություն: Բայց քրիստոնեական հավատքը մարմնացած հավատք է և ոչ թե վերացական: Իհարկե, գոյություն ունի նաև կրոնի միստիկ կողմը, որ Աստծու ներկայությունն է մեր մեջ: Բայց չենք կարող այդ զգացումը մեր մեջ պահել վասն սեփական հաճույքի, որովհետև Աստծու ներկայությունը մեզ մղում է դեպի ուրիշ մարդիկ. Աստծու Որդու մարմնառումը այս ճշմարտության մեծագույն ապացույցն է: Քրիստոնեությունն, իրավ, նաև ուսմունք է, հավատք՝ առ Գերագույն Էակը: Մակայն քանի որ այդ Էակը Արարիչն է և Հայրը, ապա նրա հանդեպ հավատքը չի կարող գուտ մտավոր լինել, պետք է այն դրսևորվի ամենօրյա կյանքում, արտահայտվի բարոյագիտության մեջ: Այսպիսով, քրիստոնեության մեջ դավանաբանությունն անբաժանելի է բարոյագիտությունից: Աստծու մասին պատկերացումը մեր մեջ ծնում է մարդու և միջմարդկային հարաբերությունների մասին որոշ հասկացություն: Սրանում է կրոնի և փիլիսոփայության տարբերությունը» [3, 29]:

«Անկախ այն բանից, թե մեր դարն ընդունում է, թե ոչ, անկարելի է կատարելապես արժևորել Ավետարանի սկզբունքների ամբողջությունը, առանց Հիսուսի անձի մեջ ճանաչելու Աստծուն՝ Գերագույն Էակին, Բացարձակ Ճշմարտությանը, որից բխում են բարոյագիտական այդ պատվիրանները: Այլապես եթե կրոնը մարդկանց միջև ապրելու կերպերից մեկն է միայն, ապա, ուրեմն, չկան վերջնական կանոններ, բարու և չարի միջև տարբերություն: Այս բարոյական հարաբերապաշտությունն, իմ կարծիքով մեր դարաշրջանի ամենալուրջ վտանգներից է: Կարծում եմ, որ մարդը պետք է վերագտնի Անվիճարկելիին հնագանդվելու զգացումը. մենք Տիեզերքի բացարձակ տերերը չենք, մենք բարերարվածներ ենք, այլ ոչ թե ամեն բարերարության աղբյուր» [3, 30]:

Վեհափառի կրոնական մոտեցումներն ամբողջանում են նրա առաջին Կոնդակում արված սահմանումներում. «Ջավակները հայոց ազգի, դիտեցե՛ք ձեր շուրջը: Ողջ աշխարհի մեջ ներկայիս յստակօրեն նշմարելի են կրօնական վերաթթնութեան նշանները, որոնք օրե օր աւելի լոյս կը դառնան առաւել տարածուն եւ ազդեցիկ: Բոլորդ ալ լաւ գիտեք, որ Հայ ժողովուրդի կեանքի շաղուածքին մեջ քրիստոնէական կրօնը եղած է այն, ինչ որ է արիւնը մարդկային մարմնին մէջ: Առատացուցե՛ք այդ առողջ արիւնը որպէսզի մեր ազգային կեանքին մէջ ան դառնայ կենդանացուցիչ եւ բարեփոխիչ ոյժ» [6, 173]:

Եզրակացություն: 1. Ըստ Վեհափառի դիտարկումների՝ հանգում ենք այն եզրակացության, որ ինքն իրեն ճանաչելը՝ «Ծանիք գրեզ»-ը, մշտատև հրամայական է մարդու համար:

2. Փիլիսոփայությունը՝ իր բանականության հիմքով, և կրոնը՝ իր հավատքի հիմքով, իրար հակասող ու հակադիր հասկացություններ չեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Գարեգին I: Հավատքի ընծան», խմբ. Իրիս Փափազյանի, Կանադա, 2009:
2. Գարեգին Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց, «Կեանքը ի հաղորդութեան ընդ Աստուծոյ: Տօնական խոհեր եւ քարոզներ» (կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր), Հայերէն շարք, ԺԱ. հատոր, Լոնդոն, 2015:
3. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, «Զրույցներ Ջովաննի Գուայտայի հետ», Ս. Էջմիածին, 2001:
4. Գարեգին Բ. Կաթողիկոս, «Ծանիք գրեզ...», Անթիլիաս-Լիբանան, 1983:
5. Գարեգին Ա. Կաթողիկոս, «Հող, մարդ եւ գիր» (Դ. Տպագրութիւն), Ս. Էջմիածին, 1996:
6. "Karekin I: The Gift of Faith", Iris Papazian, Editor, London-New York, 2009.

ФИЛОСОФСКИЕ ПОДХОДЫ КАТОЛИКОСА ГАРЕГИНА I К ВОПРОСАМ САМОИДЕНТИФИКАЦИИ ЧЕЛОВЕКА И ИХ РЕЛИГИОЗНОЙ ИНТЕРПРЕТАЦИИ

Արություն Назик
ԵԿՄ, Արմենիա
Բաղասարյան Վիկտորիա
ԵԿՄ, Արմենիա

Аннотация

С момента установления в Республике Армения независимости возникла необходимость избавиться от 70-летнего атеизма Советской Армении и создать предпосылки для возрождения христианской веры. Его Святейшество Гарегин I, Верховный Патриарх и Католикос всех армян, был одним из выдающихся деятелей XX века – решающего периода для армянского народа, взявшего на себя трудную и ответственную миссию по возрождению духовного и морального здоровья нашего народа и восстановлению близости и родства с собственной личностью. В своих проповедях и трудах, основываясь на философских концепциях и их религиозных интерпретациях Его Святейшество представил проблемы самопознания личности в новом свете.

Для раскрытия своей личности, индивидуальности и самобытности необходимо большое мужество и искренность, особенно если человек склонен к самооправданию. Прилагая усилия к самопознанию, нужно уметь преодолеть эту психологию, иначе она закроет «самосознание» личности, как непрозрачный занавес. Познание истины необходимо для нахождения истинных путей и правильной жизни на практике. Если люди не понимают, что такое добро, зло, справедливость, честность и красота, то они не могут найти секрет счастливой жизни.

Возникает вопрос: разве философия, основанная на своем интеллекте, и религия, основанная на своей вере, не противоречат друг другу? Ведь у многих теологов и философов разные точки зрения на эти вопросы. По словам Его Святейшества, интеллект не может быть препятствием для веры. Напротив, это мощный элемент проявления веры в жизнь. Вера открывает нам Бога, который находится в непосредственном контакте с нами, но не Бога, который является категорией мысли и имеет отношение только к интеллекту.

Исходя из этого рассуждения и логики, этику можно рассматривать как основу религии. Но в таком случае какая разница между религией и философией (этикой), если они обе основаны на вере и любви к Богу, человечеству и самопожертвованию?

По наблюдениям Его Святейшества, мы приходим к однозначному выводу, что познание себя, а именно «познать себя» является всегда необходимым для человека.

Философия на основе разума и религия на основе веры не являются противоречивыми понятиями.

Список использованной литературы

1. Гарегин I. Мемориал к десятой годовщине «Дарование веры», ред. Ирис Папазян, Канада, 2009.
2. Гарегин I. Живя в общении с Богом - Мысли и проповеди Святых дней, Лондон, 2015.
3. Гарегин I. Беседы с Джованни Гуайтой, Святой Эчмиадзин, 2001.
4. Гарегин 2-й Католикос, Познай самого себя, Антилиас, Ливан, 1983.
5. Гарегин I. Земля, люди и литература. Священный Эчмиадзин, 1996.
6. «Карекин I: Дарование веры», редактор Ирис Папазян, Лондон-Нью-Йорк, 2009 .

PHILOSOPHICAL APPROACHES OF CATHOLICOS GAREGIN I TO THE QUESTIONS OF HUMAN SELF-IDENTIFICATION AND THEIR RELIGIOUS INTERPRETATION

Harutyunyan Nazik
YSU, Armenia
Baghdasaryan Viktoria
YSU, Armenia

Summary

Since the independence of the Republic of Armenia, there has been a need to shake off the 70-year-old atheism of Soviet Armenia and create preconditions for the revival of the Christian faith. His Holiness Garegin I, Supreme Patriarch of all Armenians, was one of the prominent figures of that period, decisive for the Armenian people of the 20th century, who undertook the difficult and responsible mission of reviving our people's moral health and sowing rapprochement with their own identity. In his sermons and works, philosophical concepts and their religious interpretations, His Holiness presents the issues of self-knowledge in a new light.

Identity, self-description, great sincerity and courage are needed to reveal oneself. Especially when one has a tendency to self-justify. When making an effort for self-knowledge, one must be able to overcome that psychology, otherwise it will close the person's "self-consciousness" like an opaque curtain. Knowledge of the truth is necessary to live the truth in practical life to find true ways. Its people don't know what is good, evil, justice, honesty and beauty, then they cannot find the secret to a happy life.

A question arises: aren't philosophy, based on its intellect, and religion, based on its belief, contradictory concepts? After all, many theologians and philosophers have different points of view on these issues. According to His Holiness, the intellect cannot be an obstacle to faith; on the contrary, it is a powerful element in the manifestation of the faith in life. Faith reveals to us the God who is in direct contact with us, but not the God who is the order of thought and concerned only to the intellect.

With this reasoning and logic, ethics can be considered as the basis of religion. But in that case, what's the difference between religion and philosophy (ethics), if both are based on faith and love for God, humanity and self-sacrifice?

According to His Holiness's observations, we come to the clear conclusion that knowing oneself, "Know yourself", is always imperative for a person.

Philosophy on the basis of reason and religion on the basis of faith are not contradictory.

References:

1. Karekin I: The Gift of Faith Tenth Anniversary Memorial, Iris Papazian, editor, Canada, 2009.
2. Karekin I, Living in Communion with God – Thoughts and Sermons of Holy Days, London, 2015.
3. Karekin I, Conversations with Giovanni Guaita, Holy Ejmiatsin, 2001.
4. Karekin 2nd Catholicos, Know Thyself, Antelias-Lebanon, 1983.
5. Karekin I, Land, People and Literature, Holy Ejmiatsin, 1996.
6. "Karekin I: The Gift of Faith", Iris Papazian, Editor, London-New York, 2009.

Материал был представлен и отправлен на рецензию: 21.03.2021

Принято к публикации: 05.04.2021

Рецензент: канд пед. наук, доцент Лусине Айрапетян

The material was submitted and sent to review: 21.03.2021

Was accepted for publication: 05.04.2021

Reviewer: PhD, Assoc. Prof., Lusine Hayrapetyan